ԴԻԱԲԵՏԻԿ ՌԵՏԻՆՈՊԱԹԻԱՅՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ, ՍՔՐԻՆԻՆԳԻ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ ՍԽԵՄԱ



WORLD DIABETES FOUNDATION

aecp the armenian eyecare project bringing sight to armenian eyes

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՆԴԱՂԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՆԱԲՈՒՅԺԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ARMENIAN ASSOCIATION OF OPHTHALMOLOGISTS

Արհեստական բանականության միջոցով ակնահատակի նկարների պարզաբանումը հնարավորություն է տալիս անմիջապես ուղղորդելու բուժառուին ճիշտ բուժում կամ ավելի մանրակրկիտ մասնագիտական բուժզննում և բուժօգնություն ստանալուն, ինչպես նաև նշանակելու հերթական այց որոշակի ժամանակահատվածից հետո կրկին զննելու կամ ակնահատակը տեսանկարահանելու նպատակով: Դրա շնորհիվ բուժառուն տեղեկություն է ստանում իր վիճակի մասին մինչև հետազոտման վայրը լքելը:

Այսինքն՝ հիվանդին հստակ բացատրվում են իր հետագա քայլերը՝ այց բուժհիմնարկ սքրինինգի կամ ստացիոնար հետազոտման և/կամ բուժման նպատակով: Նախապես հարկ է ունենալ պայմանավորվածություն կլինիկաների հետ բուժառուին ճշգրիտ ուղեգրելու համար: Ուստի անհրաժեշտ է ճիշտ կազմակերպված թիմային աշխատանք. առաջին օղակում՝ դիաբետիկների սքրինինգի համար, երկրորդ օղակում՝ փորձառու տելեռետինոլոգի ծառայության, երրորդ օղակում՝ տեխնոլոգիական ծառայության համար, որտեղ վերլուծվում են հետազոտության արդյունքները:

Կարևոր է բուժառուին կարճ ժամանակում տալ հստակ տեղեկություն հաջորդ փուլի մասին: Դա խթանում է նրան ժամանակին դիմել անհրաժեշտ մասնագետին: